

«ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ո՞վ է լրագրողը... Մարդ, որը կարողանում է ճշգրիտ, արագ ու համակողմանիորեն իրազեկել հանրությանն այն ամենին, ինչն այդ պահին մարդկանց տեսադաշտից դուրս է, վարագույրից այն կողմ: Իսկական լրագրողը լավ գիտե, որ իր առաքելությունը քաղաքացիների՝ տեղեկատվությունից օգտվելու սահմանադրական իրավունքի իրացմանն աջակցելն է: Նա հասարակության կողմից լիազորված «դեսպանն» է, որը պաշտպանում է հանրության շահը, օգնում նրան տեղեկատվության հարահոսում ճիշտ կողմնորոշվել, իրարից զատել արժանահավատն ու կասկածելին: Լրագրողն ազատության և ժողովրդավարության բանբերն է և մունետիկը:

Ուսուցումը մեզ մոտ երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է. շրջանավարտն ստանում է լրագրության բակալավրի որակավորում:

Դիմորդներն ընդունելության քննություններ են հանձնում 3 մրցութային առարկայից՝

1. «Հայոց լեզու և գրականություն» (գրավոր)՝ կենտրոնացված համակարգով, ինչպես նաև ՀՊՄՀ-ում երկու քննություն հետևյալ մասնագիտական առարկաներից՝
2. «Լրագրության հիմունքներ» (ԼՀ) (գրավոր, բանավոր)
3. «Լրագրության տեսություն և պատմություն (ԼՏՊ) (գրավոր, բանավոր)

Դիմորդները մասնագիտական առարկաների քննություններին ներկայանում են կենտրոնացված համակարգով «Հայոց լեզու և գրականություն» (գրավոր) քննությունը դրական հանձնելուց հետո:

Մասնագիտական քննություններ.

1-ին քննություն «Լրագրության հիմունքներ» (ԼՀ) (գրավոր, բանավոր):

Հանձնարարվում է ազատ թեմայով շարադրություն, որում կդրսևորվեն դիմորդի ստեղծագործական կարողությունները: Շարադրանքը (էսսե) պետք է ունենա իրական, վավերական հիմք՝ անշուշտ, հազեցված գեղարվեստական խոսքով:

Գրավոր աշխատանքները դիմորդների հետ բանավոր քննարկելուց և գնահատելուց անմիջապես հետո՝ քննության 2-րդ փուլում, ստուգվում է դիմորդի գիտելիքների ընդհանուր մակարդակը բանավոր հարցման միջոցով: Հարցերը վերաբերում են քաղաքականությանը, տնտեսությանը, մշակույթին ու գրականությանը:

Դիմորդը պետք է իմանա հետևյալը՝

— **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:** ՀՀ Սահմանադրություն, երկրի քաղաքական կառուցվածք, անդամակցություն միջազգային կառույցներին և դաշինքներին, երկրի զարգացման ընդհանուր միտումներ և այլ հարակից հարցեր:

- **ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ:** Հայաստանի տնտեսական իրավիճակ, զարգացման հեռանկարներ, սեփականության ձևեր և այլ հարակից հարցեր:
- **ՄՇԱԿՈՒՅԹ:** Համաշխարհային և հայ թատրոն, կինո, կերպարվեստ, ճարտարապետություն, արվեստի այլ ճյուղերի զարգացում ու արդի իրավիճակ:
- **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:** Հայ և համաշխարհային գրականության դասական հեղինակներ, նրանց հիմնական ստեղծագործությունները:

Մի շարք հարցեր վերաբերում են հայ գրականության պատմությանը, հայ գրողներին և նրանց ստեղծագործություններին:

Հարցաթերթիկներում տեղ են գտել նաև մեր իրականությանն առնչվող մի շարք այլ արդիական հարցեր: Յուրաքանչյուր հարցաթերթիկ ընդգրկում է 2 հարց:

2-րդ քննություն «Լրագրության տեսություն և պատմություն» (ԼՏՊ) (գրավոր, բանավոր):

Այս քննությունը նույնպես ընթանում է երկու փուլով:

Նախ, բոլոր դիմորդները գրում են ստեղծագործական շարադրություն՝ «Ինչո՞ւ եմ ցանկանում լրագրող դառնալ» թեմայով: Այստեղ նրանք պետք է ներկայացնեն ոչ միայն իրենց պատանեկան երազանքներն ու ցանկությունները, այլև կարողանան հիմնավորել իրենց ընտրությունը:

Նշված գրավոր աշխատանքի ավարտից հետո քննությունը շարունակվում է երկրորդ փուլում:

Բանավոր պատասխանի համար դիմորդներին առաջարկվող պահանջները կամփոփվեն հարցաթերթիկներում՝ յուրաքանչյուրում երկուական հարցով: Հարցերը վերաբերում են բացառապես զանգվածային լրատվության միջոցներին և նրանց պատմությանը, մասնավորապես՝ հեռուստատեսությանը և ռադիոյին, հեռուստառադիոտեխնիկայի հնարավորություններին:

Դիմորդը պետք է դրսևորի Հայաստանի և Ռուսաստանի ԶԼՄ-ների իմացություն, կարողանա վերլուծել հայաստանյան և ռուսաստանյան լրագրողների աշխատանքը և այլն: Դիմորդը ընտրողաբար պետք է ներկայացնի իր սիրած հաղորդաշարը, լրագրողին, հաղորդավարին, հիմնավորի նրանց նկատմամբ իր համակրանքն ու վստահությունը: Դիմորդը պետք է տեղյակ լինի հանրապետությունում տպագրվող մամուլին, օրաթերթերին, մասամբ իմանա մամուլի պատմությունը:

Քննությունների ընթացքում դիմորդներին ներկայացվող ընդհանուր պահանջներն են պատասխանների ինքնուրույնությունն ու սեփական կարծիքի արտահայտման կարողությունը՝ ազատ գրույցի եղանակով:

Քննություններին նախապատրաստվելիս դիմորդները կարող են օգտվել ներքոհիշյալ գրականությունից.

1. Հայաստանի Հանրապետության Մահմանադրություն:
2. Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվական միջոցները, Երևան, 1998թ.:
3. Հ. Խաչատրյան, Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություններ, Երևան, 1996թ.:
4. Հայկական արվեստ: Հողվածների ժողովածու: 2 հատորով: Խմբ. կողմ. Ռ. Զարյան և ուրիշներ: Հ.1-1974 թ., Հ.2-1984 թ.:

5. Դեյվիդ Քեյթ Քոհլեր, Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա : Ռադիոհեռուստատեսային լուրերի պատրաստման նմատուցման ձեռնարկ, Երևան, 2001թ.:
6. Ս. Մարության, «Եթերում Երևանն է», Երևան, 1998թ.:
7. Ս. Երիցյան, Հեռուստառադիոէթերի գաղտնիքները, Երևան, 2000 թ.:
8. Ս. Երիցյան, Խոհեր կադրից դուրս, Երևան, 2002 թ.:
9. Ժուռնալիստիկա /Տեսության և պատմության հարցեր/ - Երևան, 1999թ., Երևանի պետական համալսարան /ՊրակԱ/:
10. Ժուռնալիստիկա /Տեսության և պատմության հարցեր/ - Երևան 2001 թ., Երևանի պետական համալսարան / ՊրակԲ./:
11. Ժուռնալիստիկա /Տեսության և պատմության հարցեր / - Երևան 2003 թ., Երևանի պետական համալսարան /ՊրակԳ/
12. Ժուռնալիստիկա /Տեսության և պատմության հարցեր / - Երևան 2003 թ. Երևանի պետական համալսարան /ՊրակԴ/
13. Ժուռնալիստիկա /Տեսության և պատմության հարցեր / - Երևան 2003թ. Երևանի պետական համալսարան /ՊրակԵ/
14. Հեռուստատեսային ժուռնալիստիկա, Երևան, 2003 թ., Երևանի պետական համալսարան:
15. Լրատվության հիմունքներ, Գործնական ձեռնարկ լրագրողների համար – Pro Media Երևան, 2000թ.:
16. Э. Багиров, Р. Боецкий, А. Юровский – Основы телевизионной журналистики: М.1984 г.
17. Г. Кузнецов - Журналистика на экране. 1985 г.
- 18.. Ц. Муратов - Диалог . 1983 г.
19. В. Саппак - Телевидение и мы - 1988 г.

«ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1-ին քննություն «Լրագրության հիմունքներ» (ԼՀ) (գրավոր, բանավոր)

Գրավոր փուլ.

1. Ազատ թեմայով ստեղծագործական շարադրություն -0 -7 միավոր

Բանավոր փուլ.

- 1-ին հարց քաղաքագիտության կամ տնտեսագիտության բնագավառից - 0– 7 միավոր

- 2-րդ հարց մշակույթի բնագավառից - 0 - 6 միավոր

Ընդամենը (գրավոր, բանավոր)՝ 20 միավոր:

2-րդ քննություն «Լրագրության տեսություն և պատմություն» (ԼՏՊ)

(գրավոր,բանավոր)

Գրավոր փուլ.

1. Ստեղծագործական շարադրություն՝ «Ինչու՞ եմ ցանկանում լրագրող դառնալ»
թեմայով - 0-7 միավոր

Բանավոր փուլ

1. Հարց, որը վերաբերում է զանգվածային լրատվության միջոցներին, նրանց պատմությանը, մասնավորապես՝ հեռուստատեսությանն ու ռադիոյին - 0-7 միավոր
2. Հարց, երբ դիմորդը հանդես է բերում վերլուծական մոտեցում զանգվածային լրատվության միջոցների մասին - 0 – 6 միավոր:

Ընդամենը՝ (գրավոր, բանավոր) 20 միավոր

Առաջին և երկրորդ քննությունների վերջնական գնահատականը ձևավորվում է յուրաքանչյուր քննության երկու փուլերի գնահատականների հանրագումարով՝ համաձայն ներկայացված գնահատման չափանիշների:

Լրագրության ամբիոնի վարիչ՝

Լևոն Գալստյան